

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Իրիւրի մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանոցման տողը

20 սանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՋՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրողները եւ

լին տրոշիր

Rev. Père G. Kalemkarian Michitaris Vienne
tengasce No. 4

ՀԱՅԱՍՏԵՐՆԵՐՈՒ
ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

ՊՐՈՒԲՍԷԼ, 18 Յուլիս

Հայաստաններու Համաժողովը այսօր կէս օրէն յետոյ վերսկսաւ իր գործին, ընդ նախագահութեամբ Տ. Հուզօ տը Լըհէյի:

Տ. Բիէն Բիյառն նախ կարգաց գերման երեսփոխան Տ. Պէնսթէնի եւ ֆրանսացի ծերակուտական Տ. Գիլմանսօի համախոհութիւն յայտնող նամակները. յետոյ յանուն գոմիսիօնին առաջարկեց միջադատին առժամանակեայ յանձնախումբ մը կազմել, որ պաշտօն ունենայ քաղաքակիրթ երկիրներու մէջ արգէն գոյութիւն ունեցող գոմիսիներուն դիմում ընելու եւ կարգաւորելու անոնց գործառնութիւնները իրենց մէջ միջադատին համաձայնութիւն մը հաստատելով:

Այս առաջարկը ծափահարութեամբ ընդունուեցաւ եւ այս յանձնախումբին անդամներ ընտրուեցան Գերմանացի, Տանիմարցացի, Պէլճիզացի, Ֆրանսացի, Անգլիացի, Հոլանտացի, Իտալացի, Զուիցերիացի եւ Աւստրիացի նշանաւոր անձնաւորութիւններ:

Յետոյ Տ. Ժոնէս բարձր ճարտասանութեամբ մը բացատրեց յանձնախումբէն առաջարկուած օրակարգին սահմանները:

Եւրոպան, ըսաւ, յանցաւոր է, եւ եղանակներ մը պիտի ըլլան եթէ այսօր չմիջամտէ: Կայսրութիւնները տակն ու վրայ ընկելու խնդիր չկայ, բայց հարկ է հանրային կարծիքի հաւաքական գործունէութեամբ եւրոպական պետութիւնները միջամտելու ստիպել:

Հայերէն զատ կան Ֆինլանդիան, Սլեովիկը, Ալգաս-Լոնէնը, զրկուած հայրենիքի կապերէն: Մենք չպիտի կրնայինք ուրեմն մտածել Հայաստանի համար պատերազմ յարուցանելու, ինչպէս մեր ֆինլանտացի եւ ալգասի եղբայրներուն համար չըրինք: Բայց դիւանագիտական բացայայտ ընտելի մը կայ (°): Հանրային կարծիքի միաբան գործակցութիւնը պիտի մղէ եւրոպան որ զանի յարգէ:

Ֆրանսո-Ռուս զինակցութիւնը չը

պիտի գոյութիւն ունենար եթէ ժողովուրդի մը խոյստովման գնովը եղած ըլլար: Ջրաւեր որ ֆրանսական հանրապետութիւնը փոքր Ասիոյ մէջ միայն մէկ հիւպատոս տեղեցնէ, պէտք է որ նա իր պարտքը լիովին կատարէ, որպէս զի մահուան ստուերը անգամ մը եւս չտարածուի այդ գոթող ժողովուրդին վրայ:

Հետեւեալ օրակարգը միաձայնութեամբ ընդունուեցաւ.

Համաժողովը համոզուած է թէ Հայոց կողմէ պահանջուած բարենորոգումները եւ ապահովութիւնները կըրնան իրականանալ, թուրքիոյ հողային ամբողջութեանը առանց ուրիշ կերպով վնասելու:

Համոզուած է նաեւ թէ նոյնինքն թուրք ժողովուրդին օգտակար է բարենորոգման այս գործին աջակցիլ:

Վերջիշեղով հոս Պետլիկի զաշնագրին 61 յօդուածի բնագիրը:

Նկատելով թէ այս յօդուածով եւրոպան պարտաւորուած ու յանձնառու եղած է ապահովելու հայ ժողովուրդին կեանքը, աղքատութիւնը, շըրջապելու աղատութիւնը, իրենց ինչքերուն անարգել վայելումը եւ խղճի ազատութիւնը:

Կը յայտարարէ թէ եւրոպայի պատւոյն եւ մարդկութեան բարօրութեանը համար, ժամանակն է որ այս յօդուածը կատարելապէս եւ օրինաւորապէս գործադրութեան դրուի:

Կը հրաւիրէ կառավարութիւնները ու ժողովուրդները շարժիլ 1895ի յիշատագրին տրամադրութեանը համեմատ միաբան միջամտութիւն մը բնելու, եւ պաշտօն կուտայ իր միջադատին միայն զօմիսիօնին կազմակերպիլ գործունէայ բրօքական մը բաղըմաններուն, մամուլին եւ հասարակաց կարծիքին:

Տիար տը Բուէսանսէ հետեւեալ բանաձեւը բոլոր իր մանրամասնութեամբ բացատրեց եւ շեքմօրէն անոր ուժ տուաւ, որ նոյնպէս ընդունուեցաւ:

Համաժողովը՝ Հայաստանի մէջ Ֆրանսայի եւ Ռուսիոյ հիւպատոսական պաշտօնեաներու թիւը աւելցնելու ձեռնարկը գոյութեամբ արձանագրելով, կը հրաւիրէ օրէնսդրական ժողովներու մասնակցող իր անդամները, որ իրենց վերաբերած կառավարութիւններէն խնդրեն նոյնանման ձեռնարկներ ընել:

Յետոյ հետեւեալ բանաձեւը առաջարկուեցաւ Բիէն Բիյառնի կողմէ.

Համաժողովը՝ եւրոպական մամու-

լին հաղորդելով քուէարկուած որոշումներու բնագիրը, կը յուսայ թէ եւրոպայի թերթերը, արգարութեան եւ մարդասիրութեան ոգով, աւելի լայնօրէն եւ բարեացակամութեամբ պիտի հրատարակեն Հայաստանի լուրերը, որք իրենց պիտի հաղորդուին միայն յանձնաժողովին կողմէն:

Տիկին Սէվրաին խնդրեց որ այդ վարկեանէն կազմուի օրաթերթի եւրոպացի մը, իրենց սեփականատէրերուն անուններով, որոնց անձնապէս յարգող կարգացուի հողորդութեանը հրատարակելու. այսպէս, աւելցուց, յարկիկայ տարւոյ Համաժողովին կարիքի պիտի ըլլայ հրապարակաւ նշանակել անոնց անունները որոնք զայի չեն կատարած:

Այս առաջարկութիւնն ալ ընդունուեցաւ:

Նախագահ Տ. Հիւզօ Չերմօրէն շնորհաւորեց պէլճիզական մամուլի վարժաւորը եւ ընթացքը որ Համաժողովին պարագաները ներկայացուց:

Յետոյ Համաժողովը որոշեց որ իր միայն ջոմիթէի կեդրոնական վարչ Պրուսէլ ըլլայ եւ նոյնպէս յառաջիկայ Համաժողովը հոն գումարուի:

Տ. Բիէն Բիյառնի պաշտօն տրուեցաւ միայն զօմիթէին տեղեկագիրը հրատարակութեան տալու:

Համաժողովը ցրուեցաւ յառաջիկայ տարի գումարուելու որոշմամբ:

ՄԵՐ ԱՅԻՆ Ք

Մեր անտարբեր շնորհը. — Չենք գիտեր թէ Եգիպտոսի (Գահիթէ եւ Աղէքսանդրիա), Բուլղարիոյ (Վոսնա, Ռուսուք), Ամերիկայի, Անգլիոյ եւ այլ տեղերու հայ գաղթականութիւններն ինչպէս են, բայց Բարիզի գաղթականութիւնն որուն հետ երբեմն — ո՛հ չա՛տ քիչ անգամ — շփուելու առիթը կուենանաք, բոլորովին անտարբեր կը գտնենք ազգային կամ հայկական գործերու ու խնդիրներու մասին: Բարիզի հայերու հետաքրքրութիւնը միայն այն պարագային կը շարժի երբ կուրի, պայքարի, փոթորկալից վիճաբանութեան հոտ

առնէ... Այդ ալ բան մըն է պիտի ըսէք անշուշտ. անտարա-կոյս, բայց ի՞նչու արդեօք միեւնոյն հետաքրքրութիւնը չունին Բարիզի հայերը ուրիշ խնդիրներու համար ալ, ի՞նչու արդեօք չեն հետաքրքրուիր մեր ազգային գրական, գիտական, ընկերական, ուսանողական, մամուլի, բարեգործական, եւ այլն, եւ այլն հարցերով ալ. ի՞նչու, Այսպէս՝ զրիթէ մէկ ամսուան մէջ Բարիզի զանազան հայ անհատներու եւ խմբերու ձեռնբերութեամբ տեղի ունեցան մեծ ու պզտիկ երեկոյթներ, բանախօսութիւններ, հաւաքումներ, ժողովներ, եւ այլն, եւ ասոնց մէջ, յաւելիլ է ըսել, Հայերն իրենց բացակայութեամբ կը փայլէին: Եթէ մենք մեր գործերով չհետաքրքրուինք, անոնցով չզբաղինք, օտարն ի՞նչու պիտի զբաղուի: Օրինակ՝ Բարիզի հայոց Բարեգործական ընկերութիւնը տասն օրուան մէջ երկու անգամ հրաւիրագիր լրկեց Բարիզի գաղթականութեան, իւր ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու: առաջի անգամին (կէս օրէն յետոյ ժամը չորս ու կէսին) միայն քսան հոգի եկան, երկրորդ անգամին (երէկ երեկոյ ժամը ութ ու կէսին) հազիւ տասը հոգիի հասաւ ժողովականներու թիւը (°°) Արի՛ տե՛ս որ Բարիզի մէջ 1000էն աւելի հայեր կան (°) Բարեգործական ընկերութեան զատ, Բարիզի մէջ ի՞նչ ունինք որ ա՛յնքան սրտի մօտիկ լինի:

Դատապարտելի՛ անտարբերութիւն...

Հայկական մատուցող. — Հարիւրաւոր Հայերու կողմանէ միեւնոյն բողոքը կամ միեւնոյն հեկեկանքը լսեցինք եւ կը լսենք 8-10 օրերէ ի վեր: Մատուռին կամ եկեղեցւոյն հիմնարկութեան տարողութիւնը տեղի է ունեցեր, բայց գաղթականութիւնը բնու տեղիկութիւն չէ ուղեցեր (°) ամէն օր իր զարմանքն ու դժգոհութիւնը տարբեր կերպով կը բացատրէ: Մենք բացարձակապէս իրաւունք կուտանք այդ դժգոհներու, որոց թիւն ինչպէս յիշեցինք շատ մեծ

(°) Պէլճիզի 61 յօդուածը կակնարկէ:

է. իրաւի ինչ կը նշանակէ Բա-
րիզի մէջ Հայկական եկեղեցւոյ մը
առաջին քարը դնել և բոլոր գաղ-
թականութիւնը չը հրաւիրել այդ
ազգային-կրօնական մեծ արարո-
ղութեան... Մենք չատ չեղտեալ
հակում ունինք ամենայն ինչ խնա-
միական ձեւով կատարելու կամ
վերջացնելու, բայց այսօր հան-
րային կամ ազգային խնդիրներու
մէջ այդ սխալմը մօտաւ ինկած է.
Օտար երկրի մը մէջ ազգային
հաստատութիւն մը կամ եկեղեցիի
մը հիմնարկութիւնը բոլոր գաղ-
թականութեան կը պատկանի, գաղ-
թականութեան բոլոր անդամներն
անով կը հետաքրքրուին, որովհե-
տեւ այն ազգային ցոյց մը, ազ-
գային տեսակ մը տօն է, և այդ
տօնէն գաղթականութեան մեծա-
գոյն մասը գրկելը պարզապէս
տմարդութիւն է: Եկեղեցին որո՞ւ
համար կը շինուի, անշուշտ Բա-
րիզի բոլոր Հայերուն համար, ու-
րեմն պէտք էր հիմնարկութեան
օրը բոլոր Հայերը հրաւիրել և ո՞չ
միմիայն մի քանի անձեր: Օ՛հ
խնդիրը բոլորովին կը փոխուէր
եթէ եկեղեցին շինուէր միայն Պ.
Մանթաշեանի և իր մի քանի բա-
րեկամներուն համար, բայց այն
ատեն այդ շէնքին վրայ «Հայկա-
կան» յատկացուցիչ բառը դնելն ա-
ւելորդ պիտի լինէր: Կարգադրիչ
մասնախումբը—որո՞նցմէ ալ որ
բաղկացած լինի—քանի որ խորապէս
Բարիզ կը գտնուի, գոնէ օրինակ
թող առնէր երոպացիներէն:

Քաղաքակիրթ բոլոր կեդրոնե-
րու մէջ երբ ունէ շէնքի (կամօրջ,
պալատ, հանրային տուն, ար-
ձան և այլն) մը հիմքը կամ առա-
ջին քարը կը դրուի, այն արարո-
ղութիւնը կը կատարուի խուռն ամ-
բոխի մը առջեւ, որովհետեւ այդ
շէնքը խմբի մը, կուսակցութեան
(քաղաքական, ընկերական, կրօ-
նական և այլն) մը, շքօրայի մը կը

պատկանի կը հրաւիրուին բոլոր
կուսակիցները: Ինչո՞ւ նոյնը չը
լինէր նաեւ Հայկական եկեղեցւոյն
հիմնարկութեան օրը...:

Ասկէ զատ, մեր այսօրուան վի-
ճակին մէջ՝ որ նախաձեռնի լինելէ
շատ շատ հեռի է՝ մենք Հայերս պար-
տաւոր ենք մեր վրայ խօսել տալու,
Հայ անունը կտրելի եղածին չափ
շատ և յաճախ արտասանել և գրել
տալու եւրոպական թերթերու մէջ,
ամէն պարագայի, ամէն սուրճի
մէջ. նոյնիսկ ստեղծելու ենք ա-
ռիթներ մեր վրայ խօսել տալու,
բնականաբար Հայանպաստ ոճով...
Այս ամէն մի քիչ շատ զարգացած
Հայու ամենանուիրական և արագ
նագոյն պարտականութիւնն է,
եթէ միայն ստ Հայու զպացում և
ոգի ունի և կամ պարզապէս մարդ
է...:

Այդ Հայկական մատուռին հիմ-
նարկութիւնը փառաւոր առիթ մըն
էր Բարիզի թերթերուն մէջ եր-
կար էջեր գետեղելու, եթէ միայն
այնտեղ ներկայ լինէին Բարիզի
գաղթականութիւնէն 4-500 հոգի,
որոնք անպատճառ ներկայ կը լի-
նէին եթէ լուր ունենային...:
Մինչ արարողութիւնը ինչպէս որ
կատարուեցաւ հազիւ քանի մը տող
բռնեց Բարիզի մէկ երկու թեր-
թերուն մէջ:

Մեղիք Ս. Դաւիթ-Բեկ
Բարիզ, 19 Յուլիս

ՊՐԱՒԼԱ

Բ.

Հայաստանցի երիտասարդ մը զիս
առաջնորդեց դէպի պանդոկտներու
սրճարանները: Պէտք է ըսել թէ Դա-
նուբի ուղեւորական եղբորը գտնուող
հայ պանդոկտներու բոլոր սրճարան-
ները իրարմէ գրեթէ չեն տարբերի
անշուշտ ինքն և մաքրութեան նուազ
խնամքի տեսակետով: հոս հոն կը տես-

նուին խարխուլ սեղաններ, ջրակտուր
ըլլալու մօտ աթոռակներ, որոնց
վրայ մի քիչ յոգնութիւն առնելու
համար նստած են զայուկ դէմքով,
քրտնաթոր ու խորշամած ճակատնե-
րով հայ մշակները:

Նորեկը ամենուրեւ ուշադրութիւնը կը
գրաւէ. ամէն կողմէն «բարի եկե՛ր
էք», պարոնը կը լսուի յաջորդաբար:
Այլեւս հետաքրքրութիւնը լարուած
է, երբ մանաւանդ լսուի թէ եկողը
ազգային լրագրի մը ներկայացուցիչն
է: Ներկայներէն սրճարանին չափուշը
կամ աւելի լեզուն բերնին մէջ քիչ
շատ դարձող մէկը կը հարցնէ անձկա-
նօք. «Ի՞նչ բարի խաղա՞ր կայ եղբայր.
մինչեւ ե՞րբ պիտի քաշենք այս տա-
ռապանքը. սպասելով ա՛յլ համբերու-
թիւնիս չը մնաց»: հայրենիքէն, մեր
բնագաւառէն հասնող նամակները
գիմանալու բաներ չեն պատմիր»:

Ու կը սկսին այդ նամակներէն մա-
սեր կարգով կամ պատմել. առնե՛ց ա-
մէնն ալ մին միւսէն աւելի քստմնե-
ցուցիչ իրողութիւններ են. այն ինչ
գիւղէն հարսեր ու աղջիկներ առեւան-
գեր են, այնինչ կիստասարդ սպան-
ներ են, այսինչ գիւղի արտերը զբա-
ւեր են քիւրտերը, տուններուն վեր-
ջին անկողինը ծախքեր են հարկահա-
ւաքները, պանդոկտներուն հայրե-
նիք զրկած գրամները բնաւ իրենց
տունը չեն յանձնուեր, այլ ստակ ե-
կած ըլլալու լուրին հետ հարկահա-
ւաք-ստակներն ալ հասնելով ամ-
բողջովին յափշտակեր են ի հաշիւ 5-6
տարուան յետնեալ տուրքերու, որոնք
Սուլթանէն շնորհուած էին և որոնք
միշտ կը վճարուին բայց դարձեալ
վճարելի ցոյց կը արուին. այս սովէն
ոճիրներու ու զրկանաց դէմ կռուվա-
րութեան բողոք բարձրակրկի կը բան-
տարկուին իրեւ խառնակիչ. իբրեւ
յեղափոխական. առաջնորդարաններու
մատուցուած աղբիւսագրերը ապարդիւն
կը մնան:

Նոր հասած նամակներու այս տխուր
պարունակութիւնները պատմուած ա-
տեն սրճարանին ամէն անկիւններէն
սրտաբուլղաւ «ա՛խ»եր ու հառաչներ կը
լսուին անընդհատ:

Նորեկը որչափ որ ալ ամուր սիրտ
կրէ, չէ կարող չը յուզուիլ: Այս տե-
սակ սրտայոյզ պարագաներու մէջ ստէպ
միջիմարական խօսքեր կը պակսին
այն մարդոց բերնէն մէջ, որոնց

սիրտը յար եւ նման պատճառներով
միեւնոյն ճմլուած կը կրէ եւ ինքն ալ
միջիմարուելու առարկայ մը կամ միջի-
մարող մը կը փնտռէ. երբ մանաւանդ
ինքն եւս հայրենիքին մէջ սիրելիներ
ունի լքուած, որոնց երեսը յաւիտե-
ական չը տեսնել դատապարտուած է,
որոնց հետ չոր թղթակցութիւն մը
գոնէ ընելու գիւրդութիւններ կը պակ-
սին իրեն և որոնց յաջորդական մահ-
ուան բոլոր միայն տարուէ տարի ան-
ուղղակի միջոցներով իրեն կը հաղոր-
դուի:

Նոյն սպաւորութեան տակն էի ես
ալ, երբ ինձ էն մօտ նստողներէ մին
սթափեցուց զիս հետեւեալ խօսքե-
րով.

— Պարոն բնաւ յոյս չը կա՞յ մեր
վիճակի բարւոյցման համար:

— Ընդհակառակը բարեկամ, ըսի,
յոյս եւ հաստատ յոյս կայ: Մեր դատը
շահուած ու անոր վճռադիրը վերջնա-
կան հանգամանք ստացած է. միայն
գործադրութիւնն է որ կը յապաղի:
Մեր կացութիւնը կը նմանի այն պա-
հանջաւոր ընտանիքի կացութեան,
որ վճռաբեկ ատաւորին առջեւ իր շա-
հած դատին իրաւը ձեռքը առած,
զանի գործադրելու, կամ գործադիր
պաշտօնակցին դիմելու միջոցներուն
վրայ կը խորհրդակցի իր տան ան-
դամներուն հետ, որոնց ամենուն
միահաղոյն ջանքը ու կամքը հարկա-
ւոր է պարտեալ հակառակորդէն այդ
պահանջը գանձելու համար:

Այդ վերջին ջանքը ընելու եւ վրճ-
ապէս ու միաբանօրէն մեր կամքին
ուժը ցոյց տալուն մէջ է որ կը թե-
րանք, ու կը սպասենք որ այդ իրաւը
ինքնիրեն գործադրուի եւ մենք մի-
այն երթանք վայելել:

Այս պաշտախնայ լսելով բոլորներ-
կաները կարծեալ քիչ մը շունչ առին,
յուսահատութեան ամպը փարատեցաւ
դէմքերէն, ու սկսան իրենց փառքը
ու կամքի ուժը ցոյց տալու միջոցնե-
րու մասին կարծիքներ փոխանակել:

Էւ տեսայ ու անգամ մըն ալ համոզ-
ուեցայ թէ մեր Հայաստանցի Հայը
ամէն զոհողութեան պատրաստ է,
միայն բաւական է որ անոր այս
պարտաւորականութիւնը Ս. Գործին
օգտակարապէս գործածելու անկեղծու-
թիւնը ունեցող առաջնորդներ գտ-
նուին:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (29)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՆԱԿԱՆԻԿ ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹ

Ու Լուսիային ձեռքը բռնած՝ արագ
արագ դուրս ելաւ պարսպին Միջին
դուռներէն եւ դէպի Շահ-Պալի կոչ.
ուած գեղին լոռնաշղթան դիմեց, ու-
րուն ետեւէն կրնային վստահաբար
Աղբայ աղցնիլ ու անկից ալ վարա-
զայ վանքը ապաստանիլ:

Արդարեւ գիշերուան ժամը վեցին
մօտ, վանական ու Լուսիա վարա-
զայ հին վանքը հասան, որ կէս ժամ
հեռաւորութիւն ունի նորաջէն վան-
քէն: Հին վանքին վերեւը, վարա-
զայ համանուն լեռան տակ, անագին
ժայռեր կային, երկուքն ալ հոն ա-
պաստանեցան:

— Ո՛հ, սիրելի վանականս, մըր-

միջեց Լուսիա այնպիսի ձայնով մը՝
որ բնութեան հրաշակերտ կոչուած
այս էակին բովանդակ էութենէն կը
ներդաշնակուէր. այս երկրորդ ան-
գամն է որ կեանքս կը փրկես, այն-
պէս չէ՞:

— Աստուած կը փրկէ քու կեանքը,
Լուսիա՛, ո՛չ թէ ես, նկատել տուաւ
վանական: Միեւնոյն ատեն այս գա-
շոյնը զոր դու նուիրեցիր ինծի,
գիտցիր որ անանկ պարագայի մը մէջ
աղատած է կեանքս, որ բոլորովին
կորսուած էի:

Ու վանական պատմեց բոլոր ա՛յն
եղելութիւններն, որոնք պատահած է-
ին թէ Լուսիայի հօր գլխէն եւ թէ ի-
րը:

— Աստուած իմ... ըսելէ թէ այս-
քան տարիներէ ի վեր աւագակութիւն
կընէր իմ հայրս, բացառանչեց Լու-
սիա:

Աւագակութիւն... ո՛չ, Լուսիա՛,
ո՛չ... միթէ՞ աւագակ անուն կուտաս
ա՛յն մարդուն որ չարագործ ձեռքերը
ղարնելու համար կը պարտաւորուի
չարագործներու հետեւիլ, մինչեւ որ
իր նպատակին հասնի: Այսպէս եղած
է հօրդ աւագակութիւնը...:

— վանական... հիմակ կը հաս-
կնամ թէ ի՞նչու համար մայրս հօրմէս
հասած մէկ գրութիւնը կարդալուն
պէս կաթուածահար եղաւ ու տարի-
ներով հիւանդ պառկեցաւ: մինչեւ
մեռնելը...: Ըսելէ թէ մօրս գրած էր
ան:

— Թերեւս... ատանկ բան մը
չըսաւ ինծի հայրդ: Միայն թէ սա
գաշոյնիդ գաղտնիքը յայտնեց ինծի
զոր դուն ալ չէիր գիտեր:

— Գիտէի՞... բայց...

— Գիտէիր մի՞...:

— Այո՛:

— Ի՞նչու ուրեմն չուղեցիր յայտնել:

— Եթէ յայտնէի... միմիջեց Լու-
սիա...

— Ի՞նչ կ'ըլլար, ըսէ՛:

— Պէտք է որ գուն մեր տունը մը-
նայիր:

— Այդ էր պատճառն որ չուղեցիր
յայտնել:

— Այո՛, եթէ կուզես, տո՛ւր ինծի
ձեռքով բանամ:

— Ահաւասի՛կ: Բա՛ց:

Լուսիա առաւ գաշոյնն ու կոթը
սեղմնով բացաւ:

— Տե՛ս, հօրս անունն ու մականուն-

նը գրուած է, յարեց Լուսիա:

— ձիւտ է, միմիջեց վանական:

Գիշերը լուսնալու մօտ էր: Այս եր-
կու ամբիժ հոգիները վարագայ մեծ
ձորը ճեղքելով հասան դէպի Հայոց
ձոր տանող ճամբուն վրայ:

— Հիմակ ուղղակի էրմբուր կեր-
թանք, ըսաւ վանական: Հայրդ ան-
պատճառ տասներկու հոգիով այնտեղ
կը լինի: Թէպէտեւ երկու օրէն ան-
կից նորէն վարագայ լեռան մէջ պիտի
վերադառնանք խուժքով, սակայն ա-
ւելի աղէկ է որ մենք անոնց գանդ-
ուած տեղն երթանք ու զարմացնենք
զիրենք:

— Հայրս խուժը ունի՞:

— Հապա՞... կտրիճ երիտասարդնե-
րէ բաղկացած խուժը մը ունի, որոնք
Հայ գիշերորի տարազով են ամեն-
քէն ալ:

— Ա՛խ, երանի՞ թէ ժամանակ ու-
նենայինք մեծ հայրերիս ալ մէկտեղ
առնելու... ո՛վ գիտէ ինչ թշուառու-
թեան պիտի դատապարտուի իմ պատ-
ճառաւ:

— Աստուած կարողէ... յոյսդ մի
կտրեր, Լուսիա՛:

Այս անուշ խօսակցութիւններէն ետ-

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՔՐԻՇ. 5 Յուլիս

Օր չըլլալ որ քաղաք Մոշիւորի պողոտային վրայ, ալիւսը քաղաք ներքեկած նորեկ հայ գաղթականներու չը հանդիպիս. և եթէ իրենց հարցունես թէ՛ ինչո՞ւ եկած են, միեւնոյն վայրկեանին սա սովորական պատասխանը կը ստանաս. «Եղբայր հիւանդ եմ, հիւանդանոց պիտի երթամ գրպանս դրամ չը կայ. անօթի եմ, պստկելու տեղ չունիմ, մէկը չեմ ճանչնար, հոս Աղքատախնամ Ընկերութիւն մը կայ եղբր, հիւանդներու կօգնէ եղբր, կաղաչեմ եթէ Հայ ես, Հայու արիւն կը կրես ինծի այդ պարոններուն տար» ևն. և այլն. Այսպէս շուրջը 5-10 հոգի անպակաս են. Ասոր վերջը ո՞ր պիտի երթայ, մենք ալ չենք գիտեր.

Ասոնց մէջ երբեմն կը գտնուին այնպիսի աներես հիւանդներ ալ, որք իրենք (քէմէրին) չը քակելու համար, կուգան աղքատ հիւանդաց խնամակալութեան դուռը ձեռք կառնեն.

Շատեր ալ կան, որք իրենց բան գործ ըրած են, կարգ մը ան ձերու բարեսրտութիւնը չահագործելով գրամ շորթել, ու յետոյքա. դաքն քաղաք պտըտիլ.

Այն տեսակներն ալ պակաս չեն Պաքիշ եկողներուն մէջ, որք իրենց զգուելի արհեստը հոս ի գործ դնելը չը յաջողնէն յետոյ, կը դիմեն խնամակալութեան. ու այդ պատճառաւ, երբեմն կը պատահին կռիւներ գաղթականութեան տգէտ դասակարգին մէջ.

Ի զուր, որո՞ւ կըսես. պէ՛ եղբայր հոս աղքատախնամ, «թէնպէլ» անիւնով ընկերութիւն չը կայ, հոս տեղւոյս աղքատ հիւանդներու համար գանձանակ մը հաստատ.

ո ած է, որ կիրակիէ կիրակի, մի քանի երկուսարդաց կողմէ, Հայոց սրճարանները կը շրջագայի. այս է ընդ ամենը.

Հակառակ օրէնքին, գրեթէ միշտ ալ յայտ հաւաքուած դրամները, վերոյիշեալներու նման անձերու տրուած է. այսօր, որ գաղթականութեան կողմէն բողոքները շատցած են, իշխալ խնամակալութիւնը շուրհեր մնացեր է թէ՛ ինչ պատասխանէ իրեն դիմողներուն. և որովհետեւ, խնամակալութիւնը իր աչքի առջըք օրէնք մը ունի գծուած. այն է, միմիայն տեղւոյս գաղթականութեան աղքատ հիւանդներու օգնել, և գանձանակն ալ այդ բանին համար հաստատուած է. և ոչ թէ՛ Պոքիշ եկող գաղթ, «չանկըր» և կամ «ըսկուլամէնզ» ունեցող կարգ մը մարդոց օգնելու համար.

Չայս Ռուսներու և Պուլկարիոյ բոլոր գաղթականութեան ծանուցանելով, վերջնականապէս կադ. դարարեմ որ, երբոր իրենց ունէ հիւանդութիւնը դարձանելու համար Պոքիշ գալու ըլլան, չըլլալ որ տեղւոյս աղքատ հիւանդներու գանձանակին վրայ յայտնեն ինչ դենն. որովհետեւ յուսախար պիտի ըլլան, ու իրենց վիճակը տխուր, և աւելի արգահատելի պիտի ըլլայ. ահա այս է գաղթա. կանոնութեան, և խնամակալութեան վիճիս որոշումը.

Նաեւ հոս չը մոռնալ իշխու, վերջերս քաղաք Մոշիւորի ոստիկանապետի սղգարարութիւնը թէ՛ «սրճարաններու մէջ բացի սրճարաններէ, և ոչ մէկը պիտի գիշերէ, հակառակ պարագային, թէ՛ սրճարանապետը, և թէ՛ հոգ գիշերողը պիտի բանտ առաջնորդուին, մինչեւ իսկ եթէ ունենան օրինաւոր անցագիր».

Այ եկողը թող մտածէ. «Արիւն ձեր ի գլուխ ձեր».

Տեղւոյս Հայկական Ընթերցարանի վարչութիւնը, նախապէս մի քանի անգամներու հետ տեսակցելով, կարեւոր գոհացում մը տուաւ գաղթականութեան.

Որպէջով, հայերէն, ռուսներէն և ֆրանսերէն ուսուցանելու համար գիշերային դասախօսութիւններ հաստատել.

Իւ այդ պատճառաւ, վարչութիւնը մի քանի ձեռնհաս երիտասարդներու դիմելով, վերոյիշեալ դասերը աւանդելու համար պաշտօններ յանձնեց.

Փափաքելի է որ ժամանակին այդ կարգ մը պահանջողները, աւելի էն օգտուելով վերոյիշեալ դասախօսութեանց ներկայ գտնուին.

Հարցում մըն ալ «Արագ» ընկերութեան վարչութեան սղգի վելով, կը վերջացնի գրութիւնս. ինչո՞ւ համար, ինչպատ տեղւոյս Հայկական Ընթերցարանի ներկայացում տրուած միջոցին, վարչութեան կողմէն պաշտօնապէս ձեռ յանձնուած համեստ գիշերով տոմսակները պաշտօնական կերպով մերժեցիք.

Եթէ ունի՛ք մի քիչ աղգային նախաձեռնողութիւն, և բնկերական արժանապատուութիւն, պէտք է պատասխանէք.

Արա-Շահմիր

ԿՐԿԻՆ ԲՈՒՆՈՒԹԻՒՆ

Յիւլիոյ, 10 Յուլիս

Կերեւի թէ քաղաքիս դաշնակցականներուն դրամը հատեր է. մանաւանդ որ Զօրեանց իր բացած մասնաւոր վարժարանին պաշտօնեաներուն անվճար մնացած սովորականները վճարելու ստիպողական հարկին մէջ կը գտնուին. Այս նպատակով Մէրճիմէկեան հայ նորահաստատ վաճառատունը

կը ներկայանայ անցած օր ինք Զօրեանց Պաշտօնեան ներկայացուցիչը, և յանուն Դաշնակցութեան բաւական խոշոր գումար մը կը պահանջէ. վաճառատան տնօրէն Ե. Խ. կը մերժէ և ներկայաբերի գիշեր տուն դառնալու ատեն քանի մը դաշնակցականներէ յարձակում կընելով՝ արիւնջուայ և անդգայ վիճակի մէջ գետին կիշնայ. Երկրորդ անգամ դաշնակցութեան կողմէն իր խաչագողութեամբ և օղակներով յայտնաբերուած ֆիլիպպիներուն քաջ ծանօթ Յովակիմ Թաւ. միգիան կերթայ կը պահանջէ գրամ նոյն վաճառատան տիրոջմէն և կիմանանք թէ ուրիշ հայ վաճառականի մը միջնորդութեամբը, — որ, ըսենք փակագծի մէջ, շատ տխուր դեր մը ստանձնեց է և եթէ իր այդ միջնորդի գերը շարունակէ կատարել, շուտով իր անունը պիտի տեսնէ այս սխալակներուն մէջ, — պահանջուածէն բան մը զեղչելով գումար մը կը վճարեն.

Եթէ դաշնակցութիւնը կը յուսայ Մակեդոնական գիմիթիին աջակցութեանը յենելով, իր տկարամիտ արբակներուն միջոցով անպատիւ այսպիսի աւագակային վարմունք ունենալ, շատ կը սխալի. Ամէն մարդ Մէրճիմէկեանի պէս անտիրոծ ու վախկոտ չէ.

Դաշնակցութեան դրամ հաւաքելու այս եղանակը, թէ՛ Պուլկարիա և թէ՛ Թուրքիա, ամբողջ հայութեան պարսաւանաց առարկայ եղած է և շուտով այստեղ ալ իր դէմ պիտի կանգնի հայ երիտասարդութեան արգելիչ բազուկը և դուրս պիտի վռնտէ իր մէջ բոյն գտած Զօրեանցները և Թաւմիգեանները.

ՓՈՒՆԱՐԻՆՈՒԹԻՒՆ

Արձակուրդի պատճառաւ մեր բաժանորդներուն ներկայ տարեշրջանէն քանի մը թիւ պակաս թերթ տրուելուն փոխարէն, կուգանք յայտարարել թէ «Մոնուշ Հայկական» երգարանը կամ «Հայրենիքի Զոհեր» գիրքը, որն որ կընտրեն, միայն կէս ֆրանքի փոխարէն իրենց պիտի դրուկենք.

է, խո՛ւմբն է... մրմնջեց Լուսիա. Ու խելայեղ վիճակով մը ապառաժէն վար իջաւ ու սկսաւ մարդկային ստուերներուն կողմը յառաջանալ. Յետոյ կեցաւ... անոնց ձայներուն աւանդ դրաւ... լսեց, այո՛, լսեց անոնց խոսակցութիւնը. Հոգին թրթրուաց, երբոր խաղաւ որ հայերէն կը խօսէին անոնք.

— Ա՛լ չեմ կասկածիր... թո՛ղմեց Լուսիա ինքնիրեն. Եկողները հօրս խումբին մարդիկներն են, որովհետեւ վաճառական կըսէր թէ անոնք այս կողմերը պիտի գան ու այս լեռը պիտի ընեն. իրենց ամենէն ապահով ապաստանարանը. Թերեւս ճուղեցին սպասել էրմէրուի մէջ... Թերեւս հօրս կաթօրը չթողուց որ օր մըն ալ համբերէին այնտեղ. Բայց վաճառական... կարելի է ան ալ հետերին է. Ո՛հ, որչափ խենթ էի որ լացի, որչափ խենթ էի որ կարծեցի թէ այդ պաշտելի հրեշտակիս վտանգ մը հասած էր. Ո՛չ, ո՛չ... անպատճառ հետերին է. Անիկա բարի է, անիկա շատ բարի է... ու Աստուած բարի մարդերուն քայլերը կ'առաջնորդէ... (Շարունակելի)

քը, արդէն լոյսը բոլորովին ճեղքուած էր. վաճառական խոհեմութիւն համարեց լեռան ժայռերուն մէջ սպասել, մինչեւ մթնիլը. Հետեւաբար Լուսիային հետ վարագայ լեռան ետին գտնուող ամենէն ապահով ժայռի մը տակ ապաստանեցաւ. Միայն թէ պաշարէ դուրկ ըլլալուն, Լուսիայի յայտնեց թէ կուգէր մօտակայ գիւղ մը երթալ.

— Կասկածելու բան մը չկայ, հարցուց Լուսիա.

— Ամենեւին, պատասխանեց վաճառական.

— Մի երթար... հոգ չէ... այսօր ալ առանց ճաշելու կ'անցունենք.

— Չըլլա՞ր. մանաւանդ խումբը մեր դէմն երբ ելնէ, հացի պէտք ունի.

— Դո՛ւն գիտես... մրմնջեց Լուսիա.

վաճառական զգուշութեամբ մը ժայռերէն վար իջաւ ու մօտակայ գիւղի մը ձամբան բռնեց.

Լուսիա ձեռքը երեսին տարաւ ու սկսաւ մտածել.

Արդարեւ, այն գիւղը ուր վաճառական պաշար առնելու գնաց, հազիւ ժամու մը չափ հեռաւորութիւն ունէր.

Հո՛ն Ռէս մը կար, Ավօ անունով, շատ բարի ու հայրենասէր մէկն էր. վաճառական ուղղակի անոր տունը պիտի երթար, երբ չորս ծպտեալ ոստիկաններ ձերբակալեցին զինքը. Փոռտեղ ջանաց արգարացի պատճառներ գտնել. Ոստիկանները ձեռքերէն կաշկանդելով ուղղակի քաղաք տարին.

ՀԱՅՐ ԵՒ ԱՂԱՊԿ

Լուսիա ժամերով սպասեց. Աւա՛ղ, կէս օրը կ'անցնէր, գեռ վաճառական չէր վերադարձած.

— Աստուած իմ, ի՞նչ պատահեցաւ արդեօք, հեծկլտաց գեղունի Լուսիա տրտասուելով.

Ու փոռտեղ ժայռերու մէջէն լսուած ամէն ձայնին, ամեն շշուկին ու ամեն արձագանգին իր սիրտը կը տրոփէր. ոչ եկող կար և ոչ ալ յոյս մը.

Կամաց կամաց վերջապէս ալ կը մօտենար.

Լուսիա չարչրկող անձկութեամբ մէկ ապառաժէն միւս ապառաժը կերթար, ամեն կողմ կը նայէր. վերջապէս հա-

մոգուեցաւ թէ վաճառականին փորձանք մը պատահած էր.

Ի՞նչ ընեմ... ո՞ր երթար. Թշուառ սղգիկը վերադառնաւ իր տեղը, գրնդակէ մը զարնուած եղնիկի մը պէս.

Մի, աստղերը սկսան փայլել երկնքին երեսը. Լուսիա աստղերուն նախեցաւ ու ծունկի գալով աղօթեց և լացաւ...

Կէս գիշերուան մօտ յանկարծ աղմուկ մը հասաւ իր ականջին.

Յոյսը, որ վտանգներու ժամանակ թշուառ հոգիներու մէջ ճառագայթ մըն է, Լուսիային սիրտը լեցուց պահ մը, երբ կարծեց թէ այդ շշուկը վաճառականին ոտնաձայնն է...

Ոտքի ելաւ ու ապառաժէն վարնալեցաւ.

Որչա՛փ որ գիշերը լուսնկայ չունէր, սակայն ապտառմանը վրայ բարձրացած մարդկային ստուերները կրնային նշմարուիլ. Հետեւաբար Լուսիա կրրցաւ նշմարել խումբ մը մարդերու ըստուերներ, որոնք կը մօտենային դէպի իր կեցած ապաստանը, որ ամբողջ լեռնաշղթային երկայնքին վրայ գրտնուած նշանաւոր ապառաժն էր.

— Ա՛խ, Աստուած իմ... խո՛ւմբն

ՏՊՊՐԻՉՏԷՆ ՄԷՔԹՈՒՊ

ՏՊՊՐԻՉ, 7 Յուլիս

Մուշկի Էֆենտի,

Խառնակ կազմի մեջ մեծագույն զին 42 նոմերոսն առ Տոպրիչ միլիթ-տաշարմըղըն հալու աշխարհն առ-լայը պիր պէնտ եազմըն օլտըղընը կէօրիւնտիւ: Յագաթ պիզէ սիզին կէօրիւնտիւ կէօրիւնտիւ յայըմազ չիւնքի մէմէթիմիդտէ պիր թաղըմ գալէմէ կէլմէզ իշլէր 1901 սէնէսին-տէն պէրու տէվամ իթմէքտէ տիր-պուռնուն պաշլըմա սէպէպի իլէրտէ պուլընան առէմէրիմիդըն պու վա-գիթէլիւն գուլազ ասմատըղլարը տըր-քի, պիր թաղըմ ազլը էրմէզլէրին էլիւն միլիթ իշլէրին պըրազմըլար: Իշլէր եէնի պիր նուսուէնի մէքթէ-պիսիդըն շակիրտլէրի 15-20 կիրտէն էվիլէ հանդէս իշլէն երգ վէ ճառ էօ-րէնմէյէ չալըլարար, էզպէր իթտի-լէր: Ֆագաթ անլէրին պիւթիւն չա-լըլարարը վէ հազըրըղլարը պօշա կիթտի: զիրա թաղական էֆէնտիլէ-րին զարարը իլէ վէ քանանանըն ծա-նուցումընտան սօնրա հանդէսին եկե-ղեցիտէ իճրա օլընմասը մուգարէր ի-քէն վէ էհայի, ֆամիլիալար, չօ-նուգլար խընճա խընճ հանդէս իշլէն եկեղեցիտէ մօլմուշ օլուպ, երգլէր վէ ճառլար տիննէնիլէնէկի էսնատէ, իքի-քիշի պիր թաղական, տիկէրի թաշ-րալը պիր պիրլէրի իլէ պէտ մուսմէ-լէյէ պաշլայարազ, «հանդէս մէքթէպ-տէ օլուռն, քիլիսէտէ օլուռն» տէյու-միւնատէլէյի օլ գատար իլէրի կէօ-թիւրտիլէր քի թէքմիլ էհայի տա-լըլար:

Պու թէսիւֆ օլընմազ վուգուաթը եազմագլէ էֆէնտիլը մէքթիւր իքի-քիշինն ազըլարըղըն կէօթէրմէք տէկիլ տիր: Եալընը իլէրտէ վէ ազլի-ատմէլէրիմիզ պէնտիմիզի օգուլարազ պիր թաղըմ տիրայէթսիզ առէմէրէ պիզի պըրազմալարընը թէմէննի ի-տէրիզ:

Օ. Պ. — Յ. Ո. — Մ. Պ.

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Աւատրիա վէ Բուսիա էլիլէրի-նին թալէպլէրի իւղէրինէ, Պապը Ալի՝ Գոսովա, Մօնասթըր, Եան-եա վէ Սէլանիք վիլայէթլէրինտէ հիւքիւմէթ վէ մահքէմէ իտարէ վէ ուսուլլէրինն իսլահաթը իշլէն թէտպիլէր իլէ ալմըշ օլտըղը Սթանպուլտան քաւա պիլտիլիմիշ տիր: Ֆագաթ հէզարան պին թէն-ըրիպլէր լէ պիլիլիզ քի թիւրք հիւքիւմէթինն իսլահաթ նամը իլէ էլա ալմաղը թէտպիլէր եէ-նի մէզալիմ վէ թէզիլիզաթ թէտ-պիլիլէրի օլուպ:

— Շու սօն կիւնլէրտէ թէքրար Պապը Ալիի էլի բիշթօֆը ա-լաճագլար իհաթէ իթմիշ-լէր տիր: Բուս էլիսի պիր թա-րաֆտան թաղմինաթը հարպիյէ հէսապընտան 930,000 լիրա միւս-թաճէլ սուրէթտէ իսթիյօր: Փը-րանսըզ էլիսի Լօրէնտօ-թիւպէնի մաթլուպաթընն տէօրտիւնճի թազսիթի 31000 լիրա իշլէն ա-

ման զէման վէրմէյօր, պու թագ-սիթին Գուէտի Լիօնէ պանգաւընա կէշէն հաֆթա էօտէնմէսի լաղըմ իքէն՝ պու կիւնէ գատար թէլէլիթ օլընտըղընա գալընը գանգա բրօ-թէսթ իթմիշ տիր: Պապը Ալի պու թագաթի լօրէնտօնի վէրկի պօրճարրինա մահսուպ իթմէք իս-թէյօր: Ֆագաթ Ֆրանսըզ սէֆա-լէթի մէզքիւր վէրկի պօրճըն էն սօն թագաթիթինէ մահսուպ օլուռն տէյուպ, թիւրքլէրի սըզըշտըրի-յօր:

Սագրազամ Սալիտ բօշա շու-միւշքիլաթտան եազալը գուր-թօրմազ մագսէտի իլէ պիրազ միւտտէթ իշլէն վագանս իլիլիս-թէմիշ տիր:

— Սուլթան պիր իրատէ իլէ թէք-րար 2-3 միլիոն լիրա լսթիգրազ իտիլմէսիթի, վէ պու պապտէ լա-զըմ կէլէն տարիլէր վէ պանդա-լար իլէ միւղէքէրէյէ կիրիշիլմէ-սինի էմր իթմիշ տիր: Պու իս-թիգրազա նէ թէմինաթ կէօթէ-րիլէնէկի շիլմտիլիզ մէճհուլ:

— Մաքթիմիտա եէնի չէթէ-լէր հէր կիւն պաշկէօտտէրմէքտէ տիրլէր: Թիւրք ասքէրլէրի անլէրի թաազիպ ու թէսըրիլէ պէօյիւք զալլիթ կէօթէրիյօրլար, եէնի գուվիլէր աօքէրիլէ Մաքթիմիտա Թօրլանմազտա տըր:

ՏԱԽԵԼԻՅԷ

Սապըզ վալընա ասքէրիլէ զօ-մանտաւը Եանքօլըն 350 քիշի իլէ Մաքթիմիտա կէշմիշ օլտըղընը վէ ուսուլ Մաքթիմիտալարը ըս-եանա տալէթ իթմիլիլի եազմը տըր: Մէզքիւր չէթէ Սթրուսիցա ճիլարընտա թիւրք ասքէրլէրի իլէ չէտիտ պիր միւստէմէտէ պու-լընմըշ վէ թիւրքլէրտէն 25 քիշի էօլմիւշ օլտըղընը Սօֆիա թարիգի իլէ Սթմազլուտան պա թէլէկրաֆ պիլտիլիլիլ տիր:

— Մաքթիմիտա գօմիթէսիլին մէճիսի ուսուլիսի (գօնկրէս) պու-ալըն 28ինտէ Սօֆիատա թէճէմ-միւ վէ քիւշտա օլընմազ տըր:

Մէզքիւր գօնկրէթի թէշիլ իթ-մէք իշլէն հէր թարաֆտան մէ-պուլար ինթիլապ օլընըյօր: Շէհրիմիլտէն տախի իքի մէպուս ինթիլապ օլընմազ: կէշէն բա-զար Մաքթիմիտալարըն էքսէրի թօրլանմաղը իշլէն ինթիլապ պու բազարա (եարըն) գալմըշ տըր: Էհայինն պիր գըսմը սապըզ ըէ-յիս Պօրիս Սարաֆօլը ինթիլապ իթմէք էֆէնտիլընտա տըր:

Շու միւնասիպէթլէ իքի սա-թըրլէ իյզահ իտէլիմքի, Մաքէ-թիմիտա գօմիթէ աղալարը պէյ-նինտէ պիր վագըթտան պէրու ինթիլապ հասըլ օլմուշ տըր: վէ սօն կիւնլէրտէ պու ինթիլապ բէք արթմըշ օլուպ, իքի թարաֆ եէքտիլէրինէ «էսրիօն» «միւրթէ-քիպ» սըֆաթլարը վէրմէք տէրէ-ճէսինէ իլէրլէյօրլար: Ֆագաթ մէ-

մուլ իտէրիլքի շու մուհիպի թէ-էսիւֆ ահալ թէճէմմիւ օլընմազ շու սօն գօնկրէստէ նէթիճէ պու-լարազ, հէր իքի թարաֆ թէք-րար գալտաշանէ սուրէթտէ էյ է-լէ վէրուպ, վաթմանն ուսուլ տիւշմաննա գալընը կէօքիւս կէ-րէլլէր: վէ պիզ տախի անլէրին հէնի իթմիլիլիլ գըրի թէպրիք իթ-մէք մէսուտիլէթինտէ պուլըն-ըլլ:

Պու միւնասիպէթլէ Մաքէթի-նիա գօմիթէսիլին պիզիմ Դաշ-նակցալանլարա մուսվէնէթլէրին տէն տօլայը թէշէքքիլիլիլ պէ-յան իտէրէք, շու նօգթայա նա-զարը տըգգաթլարըն տալէթ ի-տէրիլք քի՝ պիզիմ Դաշնակցալան լօրըն պազը միւնասիպէթսիլ հա-րէքէթլէրինէ մէյտան վէրուպ տէ տիկէր միլլէթտաշարմըղա վէ քէզա տիկէր գօմիթէ ֆըր-գալարմըղա գարըն խուսուլմէթ վէ գալկայր արթըրմայա վասի-թա օլմասընլար: իլլա անլէրի տի-կէր էրմէնի վաթմանէրվէրլէրլէ պիլլէշմէլէ վէ իթմիլիլիլ իթմէյէ տալլիլ իթմիլլէր, մէճպուր իթ-սինլէր, էկէր անլէր սէշլ անլա-տաճաղար իսէ «պիզ սիզին տա-խիլի գալկանըզա ալէաթ օլուա-յըզ, էն էվիլ սիզ միլլէթտաշա-րընը իլէ պիլլէշմէնտէ, սօնրա պիզէ կէլին» տէսինլէր:

Իշլէթ թէքրար Ֆիլիպտէ գալ-կա ուճ վէրիյօր, տիշլէր պիլլէնի-յօր: գապուլ իթմիլիլիլ պիր մէքթուպտէ, Մաքէթիմիտա գօմի-թէսի սէպէպ թուլթուլըյօր: Մա-զընմայր, միւտէպպիրանէ տալման մալը, միլլի գալկայա սէպէպիլէթ վէրմէմէլի, էյիլիք եալարմ տէր իքէն ֆէնսպըզ հասըլ օլմուալը:

ՍԵՐՊԻԱ

Շու սըրա Պէլլրատա պիր բա-հաթսըղըզ հըսա օլընըյօր: Սըրպ-լար՝ Պուկուրիա վէ Բուսիա պէյ-նինտէ մուհապէթ արթմասընտան տօլայը էնտիշէ կէօթէրիյօրլար: րէսմէն թէքլիլ օլընան Բուս-Պուկար ասքէրիլէ մուգալէլէսինի չօգլար էլան սահիհ զանն իտիյօր-լար: Սէպա էօլլէմի տիր:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսատա թէքրար ֆիքիլլէր-ալթիւսթ օլմագտա տըր: Եէնի վիլէլա րէյիսի րահիպ վէ րահի-պէլլէրի գըրպաճէ գօլալալայա պաշլամըշ տըր: 2000 տէն զիյատէ մէքթէպլէր գալաթտը: զիրա մէզ-քիւր մէքթէպլէր րուհպան շիւ-քէթլէրինտէն (միաբանութիւն) ի-տարէ օլընմագտա ըտըլար: շա-կիրալէրի տաղըթտէն մուստա սիյահ վէ ուղուն էլպիսէլի կաթո-լիկ բաբալարը, մինի մինի բա-հիպլէրի մանասըրլարտան, մէք-թէպլէրտէն տըշարը չըգարուպ սօգաղարա պըրագըլօրլար: Հիւքիւմէթին շու հարէքէթին:

տէն տօլայը էհայի նիւմայիշաթա պաշլամըշ տըր, կիւնպէկիւն հիտ-տէթ արթըյօր, բաբալար ֆա-նաթիք էհայիլի թէշվիգ իտէյօր-լար: հիւքիւմէթ նիւմայիշիլէրի տէրտէսթ իտէյօր: նէթիճէսի շիւ-տիլիք մէճհուլ տըր:

ԳՕՐԷԼԱ

Մըսըրը պալէատա եէնիտէն գօրէյա պաշ կէօթէրմիշ տիր: Սիւլթի գալաւընտա Գուլիս 15 տէն 20 է գատար 154 քիշի գօրէյայա թուլթուլմուշ օլտըղընը թէլէկրաֆ պիլտիլիլ տիր:

ՏԷՄԻՐ ՖԱՊՐԻԳԱՍԸ

ՄԻՍՍԷ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՎԷ ՇԻՐԷԻԹ

Դոշալաքտա

Ֆագրիգալմըղա «րուլէթ» թապիր օլընան տէմիր քէքէնքէր եալըլմագ-տա օլուպ, աղըրըզ վէ սաշլամըզ ճիւնէթինէ էվրոբատա իմալ օլընան-լարտան տահա մէօհքէմ օլտըղը կիպի: ֆիլաթլարը տախի էսվէն տիր:

Քէզա պիլալար իշլէն տէմիր թրա-վէրլէր վէ սաշիլ էտէվուլըն նէզ-տիմիլտէ հազըր պուլընտըղընը, վէ ալընան սըրալիլլէրին պիլա թէլէլիլ իճրա ու իրալ օլընմազընը հէօր-մէթլին էհայիլէ իլան իտէրիլ: 2-4 Միսալ Գասպարեան եւ ղնկ:

ՄԵԾ ՁՈՒԼԱՐԱՆ

Ի ԲԷՍՏԷՆՃԷ

Գործարանիս մէջ կը ձուլուին եր-կաթեայ, պղնձեայ եւ ուրիշ մետաղ-ներէ եկեղեցւոյ մեծ ու փոքր զան-գակներ, երկրագործական եւ այլ մեքենաներու կտորներ, եւ կը շին-ուին այս վերջիններուն յատուկ դա-նակներ, կտորի անիւներու պոլշեր (շէն մինչեւ 13 թիւ), մեքենաներու կրակարաններու կասկարաններ, որոնց պատրաստն ալ կը գտնուի: Վերջապէս մեքենական ու եւ գործիքի պէտք ունեցողներ կրնան գիմիլ մեր հետեւ-եալ հասցէին, վստահ ըլլալով թէ յանձնարարութիւնք անմիջապէս կը գործադրուին գիւրամատչելի գնե-րով:

Հասցէ

Արշակ Կ. ՄԱՅԱՏՆԱՐԱՆԻ
Fabrique des cloches
Obor nou № 41 Constanta

ԾԱՆՈԹ. — Այս գործարանը կը փնտէ հայ աշակերտներ որոնք փա-փաք ունենան լաւ արհեստ մը սով-բելու: 2-4

ԾԱՆՈԹՈՒՄ

Գիրքեր, Թերքեր եւ Մանուգումներ

Կը ծանուցանենք արդոյ հայ հասա-րակութեան որ երկար առնէն ի վեր մեր յարաբերութիւններ չտկած ենք թէ՛ հայ եւ թէ՛ օտար նշանաւոր գրա-վածաւորներու հետ, աշխարհի ա-մէն կողմերը: Կը հայթաղ ինքն ու եւ է զիրք կամ թերթ՝ ու եւ է լեզուով, ու եւ է նկարակութեամբ, ու եւ է նիւթի վրայ, եւ ու եւ է գնով, ծանուցում-ներ կընդունենք բոլոր լեզուներով:

Մեր Հասցէն

M. M. Karagavoorian & Co.
Inperters and Manufactures. Books Pe-riodicals and Novelties, P.O Box 330
Chicago, U. S. A.

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна